

խանձու զանմեղն Յովսէփ մոլեգնութեամբ եղբարքն ի ստրկութիւն վաճառեցին: 40 Եւ ի ձեռն նախանձու գերկուս հոգեշնորհ անձիսս, գԱհարաւն եւ գԱարիամ, յանարժան խորհուրդ յանդգնեցուցեալ՝ բորոտեցուցանէր զմարգարէ կինն: 41 Ի ձեռն նախանձու զախոյեանաբեկ եւ զժողովրդակեցոյց զայրն գԴաւիթ՝ անհանգիստ որսայր Սաւուղ ի կորուսանել:

42 1Եւ արդ՝ զի՛նչ եւ ասեմ զարարածոցս առ միմեանս², ուր եւ զամենեցուն³ զարարիչն եւ զՏէր Յիսուս Զրիստոս առ նախանձու ժողովուրդք⁴ Յրէիցն եւ քահանայապետք նախ ժամանակաւք ձաղեալ այսպանէին, կոչելով զնա երբեմն կախարդ, յասելն, թէ *Բեդգեբուղաւ*⁵ *իշխանաւն դիւաց հաւնէ դա զդէս*^Բ. եւ դարձեալ՝ զինեմոյ անուանէին եւ զեխասեր, ասելով ցաշակերտսն, թէ *Ընդէ՞ր վարդապետն ձեր խառն ընդ մեղաւորս եւ ընդ մաքսաւորս*⁶ *ուտէ* ⁷*եւ ըմպէ*: 43 Այլ եւ չպահեցողութեամբ եւ անժամակերութեամբ եպերէին. ասեն. *Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու եւ փարիսեցիքն պահեն, եւ քո աշակերտքդ խառն ուտեն*^Ը: 44 Կոչեցին զնա եւ դիւահար. *Ո՛չ, ասեն, ստոյգ ասեմք, թէ Սամարացի ես դու, եւ դեւ գոյ ի քեզ*^Թ: 45 Եւ ժողովեալ սուտ վկայս՝ առ մոլեգնութեան⁸ քինուն զինչպետս տային խաւսել, եւ բրբուլէին իրախացեալք առաջի դատողացն. ուր ծանուցեալ Պիղատոսի, ըստ վկայութեան աւետարանչին, թէ *առ նախանձու մատնեցին զնա*^ա, լուացեալ զձեռս՝ ասէ. *Անպարտ եմ ես յարենէ առնդ, զի ոչ ինչ գտի ի դմա վնաս արժանի մահու. դուք առէ՛ք, ասէ՞, եւ ըստ ձերոց*¹⁰ *աւրինաց դատեցարո՛ւք*^Բ: 46 Եւ ընկեցեալ զնա յաւրենսն եւ ի ժողովուրդս, որք էին երկոքեանն մահապարտք, ե՛ւ ժողովուրդք Յրէիցն ե՛ւ աւրենքն: 47 Որոց չհանդուրժեալ դիւամոլ նախանձուն՝ վիճակեցին մահու, եւ ոչ ուղղոց, այլ անիծից, իբրեւ զչարագործ եւ մարդասպան, այսինքն՝ խաչի, զարարիչն եւ զնորոգիչ, զկենսա-

1 Վ. եւ արդ թողից զարարածոց առ միմեանս, եւ որ

2 Ատ. առ միմիանս

3 ՁԱտ. որ եւ զամեն... ԲԳտ. բաց են թողել զարարածոցս առ միմեանս, ուր եւ զամենեցուն

4 Ատ. ժողովուրդ

5 ՁԱտ. բեդգեբուղաւ. ԲԳտ. բեդգեբուղաւ

Բ Ղուկ. ԺԱ 15

6 ՏՏ. չիք եւ ընդ մաքսաւորս

7 Վ. եւ ըմպէ եւ որ ի կարգին. այնուհետեւ չիք մինչեւ զբաղցրն եւ զբազումողորմն (Թուղթ, 47)

Գ Մատթ. Թ 11. Ղուկ. Ե 30

Դ Մարկ. Բ 18

Ե Յովհ. Ը 48

8 Ձ. առ մոլեգնութեան

ա Մարկ. ԺԵ 10

9 ՏՏ. չիք ասէ

10 ԲԳտ. ըստ ձեր

Բ Մատթ. ԻԵ 24. Ղուկ. ԻԳ 14. Յովհ. ԺԸ 38